

ԱԿՕՍ

ԱՐՏՕՆԱՏԷՐ. AGOS YAYINCILIK BASIM HIZMETLERI SAN. ve TIC LTD. ŞTİ. աճուճով՝ Բահիլ Տիճք, ՀԻՄՆԱԳԻՐ՝ Հրահն Տիճք, ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ՎԱՐԻՉ՝ Էթիէն Մահճուպեան, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԳԷ. ԽՄԲԱԳԻՐ՝ Արիս Նալճը, ՀԱՍՑԷ՝ Հալաքեարկազի Պողոտայ, Սէպաթ Ափթ. 192 յարկաբաժին 1 Օսմանլէյ, Իսթանպուլ: Հեռ. 0 212 296 23 64 - 0212 231 56 94 Ֆաքս. 0212 247 55 19 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝ Սթար Հրատարակչութիւն Ա. Ընկ.: ԲԱԺԱՆՈՐՎԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ Թուրքիա՝ 6 ամսուան 60 ԹԼ. Տարեկան 120 ԹԼ. Եւրոպա 6 ամսուան 75 Եւրո, Տարեկան 150 Եւրո, Ամերիկա եւ Գաճատա 6 ամսուան 100 \$, Տարեկան 200 \$, Աւստրալիա՝ 6 ամսուան 110 \$, Տարեկան 220 \$: Ինթերնէթ՝ www.agos.com.tr

Մեկնակէտին հասնելով Էօզճան Ալփէրի «Աշուն» ժապաւէնը «Ոսկէ Ծիրան» փառատօնով բոլորեց իր շրջադարձը

Մրցանակները հաւաքեց

ԱՆՆԱ ՄԱՐԻԱ ԱՍԱՆՆՈՂԼՈՒ

Էօզճան Ալփէրի «Աշուն» ֆիլմը, 12-19 Յուլիս թուականներու միջեւ կայացող 6-րդ «Ոսկէ Ծիրան» Միջազգային Կինօփառատօնէն եւս վերադարձաւ երկու մրցանակներով: Բեմադրիչը, որ անձամբ մասնակցած էր փառատօնին, վերադարձին իրեն հարցումներ ուղղեցին: Ահա Էօզճան Ալ-

փէրը եւ ահա իր Երեսնեան թարմ տպաւորութիւնները.-

«Երկու տարի առաջ այլ առիթով մը մասնակցած էի Ոսկէ Ծիրան փառատօնին: Բայց իմաստալից էր այս տարուայ մասնակցութիւնս, քանի որ երկու տարուան ճամբորդութեան մը վերջին հանգրոտանն էր: Նախորդ գալուստս սցենարիս նախափորձն էր գրպանիս մէջ, որ ներկայացուցած էի հայաստանցի եւ այլ երկիրներէ ժամանած իմ

պաշտօնակիցներու...»:

«Ոսկէ Ծիրանը բաղդատմամբ միջազգային ման փառատօններու, թէեւ անկի համետ, բայց շատ անկի ջերմիկ է: Ան ի տարբերութիւն միւսներուն, ունի համակովկասեան բնոյթ մը: Պէտք է յիշեցնել, որ խաղող դաշտ մը չէ Կովկասը, այլուհանդերձ փառատօնը համերաշխութեան մէջ կը մէկտեղէ իրարու հետ խնդիրներ ունեցող երկիրներէն եկած արուեստագէտները: Մեր օրինակով, ես յատկապէս կարեւոր կը համարեմ թուրքիացի եւ հայաստանցի կինօգործիչներու շփումները: Ականատես կ'ըլլամ, որ յատկապէս երիտասարդ սերունդը կը յաջողի ջերմ բարեկամութիւններ գոյացնելու»:

• Իսկ Թուրքիա-Հայաստան կինօհարթակի (ԹՉԿՀ) մասին ի՞նչ կրնաք ըսել:

ԷՕԶՃԱՆ ԱԼՓԷՐ.- ԹՉԿՀ-ը փառատօնի կարեւորագոյն ձեռքբերումներէն մէկն է: Թէեւ դեռ հիմնարկութեան հանգրոտանին է եւ հարթակը պէտք է անցնի անկի խորաթափանց գետնի մը: Նախ պէտք է զարգացնենք մեր գիտելիքները: «Ի՞նչ գիտէք Հայաստանի շարժանկարի մասին» հարցուցած էին Հայաստանի մէջ: Տեղին հարցում մըն էր: Իրաւ ալ, մենք՝ թուրքիացիներս, Փարաշանովէն զատ զո՞վ կը ճանչ-

նայինք: Փառատօնի առիթով ծանօթացանք այլ բեմադրիչներու հետ ալ: Փոխադարձաբար ֆիլմի օրեր, բանախօսութիւններ, փանէլներ կազմակերպելով, իրար ճանաչումը կրնանք ծաւալել դէպի գրականութիւն եւ երաժշտութիւն: Օգտակար կը համարեմ բազմակերպելու կայքէջի մը հիմնադրութիւնը: Հոն կարելի է տեղադրել հայկական եւ թըրքական ֆիլմարուեստի պատմական, ժամանակակից զանազան տեղեկութիւններ:

Ես «Աշուն»ի հետ առընչուած բացառիկ գոհունակութիւն ապրեցայ: Ֆիլմը նկարահանեցի իմ մայրենի լեզուով՝ համշէներէնով: Երեսնեան հանդիսատեսը կրցաւ հաղորդուիլ նոյն լեզուին հետ: Անբացատրելի ապրումներ էին զգացածներս: Երիտասարդներուն նոր ծրագրին մէջ ինձի հետ աշխատելու ցանկութիւնն ալ յուզեց զիս: Նոր բան մը ըսել եւ այդ ըստածին պատափսանատութիւնը ստանձնելը շատ կարեւոր է:

• Յատուկ ներկայացում մը ըրիք Նարեկցի մշակութային կեդրոնին մէջ:

ԷՕԶՃԱՆ ԱԼՓԷՐ.- Այո՛: Բառին բուն իմաստով յատուկ ներկայացում մըն էր: Համշէներէնով խօսեցայ: Երբ կասկածեցայ թէ անհասկանալի կը մնամ, դիմեցի թրքերէնի կամ անգլերէնի: Ծիծաղի տեղի տուի: Յետոյ հրապարակեցի՝ «Ես մարդուն կը հաւատամ, հետո մնացի թէ՛ կրօնէն եւ թէ ազգայնականութենէն: Կը խորհիմ թէ հաւատքն ու ազգայնականութիւնը մարդկութեան սպառնացող ամենաթունաւոր գաղափարներն են»: Շատ ջերմ ծափահարութիւններով ողջունուցաւ խօսքերս: Նաեւ շատ սրտանց:



• Ֆիլմը իր պատգամներով բանավէճերու ալ տեղի տուա՞ւ:

ԷՕԶՃԱՆ ԱԼՓԷՐ.- Կը նկատեմ որ ֆիլմը Թուրքիոյ մէջ ուրիշ ընկալումներու տեղի տուաւ, իսկ արտասահմանի մէջ՝ ուրիշ: Թերեւս ալ նախկին Խորհրդային Միութեան երկիրներու համար ուրիշ ընկալումներու տեղի կու տայ...:



ԼՈՒՍԱՆԿԱՐ ԳԱՐԻՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ